

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի դպրոցական օլիմպիադայի
հանրապետական փուլի – 2016թ.
/տևողությունը՝ 150 րոպե/
11-12-րդ դասարան

1. Ի՞նչ է է կոհամակարգը, որո՞նք են նրա երկու գլխավոր հատկանիշները:
 Ի՞նչ է էկվոդիական հավասարակշռությունը.....1 միավոր
2. Որո՞նք են գյուղատնտեսության զարգացման մակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշները (թվարկել առնվազն չորս ցուցանիշ առանց վերլուծության).....1 միավոր
3. Ի՞նչ են աշխարհամակարգերը (գեոհամակարգեր): Նշե՛ք դրանց տեսակները (բերել 1 օրինակ յուրաքանչյուրից).....1 միավոր
4. Ի՞նչ են համախառն ներքին արտադրանքը (արդյունք) (ՀՆԱ) և համախառն ազգային արտադրանքը (արդյունք) (ՀԱԱ).....1 միավոր
5. Աշխարհագրական հետազոտության մեթոդների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
 - 1) Աշխարհագրական տեսական մեթոդներից լայն տարածում ունի դաշտային (արշավախմբային) մեթոդը:
 - 2) Համագիտական մեթոդները կիրառվում են միայն գիտության որոշակի ճյուղերում:
 - 3) Նկարագրական մեթոդը գիտական ճանաչողության հնագույն մեթոդներից է:
 - 4) Աշխարհագրական հետազոտությունների մեթոդները լինում են համաաշխարհագրական և մասնավոր աշխարհագրական:
 - 5) Համեմատական աշխարհագրական մեթոդի էությունն այն է, որ համեմատելով աշխարհագրական տարբեր օբյեկտներ, փորձում են բացահայտել դրանց զարգացման ընդհանուր օրինաչափությունները և տարբերությունները:
 - 6) Կոնկրետ գիտական մեթոդները կիրառելի են գիտության բոլոր ճյուղերում:
6. ԼՂՀ վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
 - 1) Անտառներում գերակշռում են փշատերև ծառատեսակները:
 - 2) Թարթառը պատկանում է Արաքսի ավազանին, որի վրա կառուցվել է Սարսանգի ջրամբարը:
 - 3) Հյուսիսում զուգահեռականի ուղղությամբ ձգվում է Մոավի լեռնաշղթան՝ Գոմշասար բարձր գագաթով (3724 մ):
 - 4) Համախառն արտադրանքի ծավալով արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
 - 5) Մեկ շնչին բաժին ընկնող վարելահողերի մակերեսը մի քանի անգամ գերազանցում է ՀՀ համապատասխան ցուցանիշը:
 - 6) Գլխավոր մշակաբույսը կարտոֆիլն է:
7. Արևմտյան Եփրատի ավազանի տրված միջլեռնային գոգավորությունների համարները դասավորել դրանց բարձրությունների նվազման կարգով..... 1 միավոր

1) Երզնկայի դաշտ	3) Կամախի դաշտ
2) Աշկալայի դաշտ	4) Դերջանի դաշտ
8. Գրել այն ժողովուրդների համարները, որոնք դավանանքով ուղղափառ են.....1 միավոր

1) ֆրանսիացիներ	5) իսպանացիներ
2) սերբեր	6) վրացիներ
3) հույներ	7) շվեդներ
4) լեհեր	8) բելոռուսներ
9. Ի՞նչ բարձրության վրա օդի ջերմաստիճանը հավասար կլինի 11°C-ի, եթե նույն պահին Արագածի գագաթին -4°C է (հաշվարկը կատարել 5°C-ով).....1 միավոր
10. Որոշել Կանադայի վարելահողերի տեսակարար կշիռը երկրի ընդհանուր տարածքում, եթե բնակչության (30 մլն) մեկ շնչի ապահովվածությունը վարելահողերով 1,8 հա/մարդ է.....1 միավոր
11. Հայկական լեռնաշխարհը գտնվում է հս.լ. 42°10' և հս.լ. 37°20' զուգահեռականների միջև: Եթե ընդունենք, որ այդ կետերը միևնույն միջօրեականի վրա են, ապա որքա՞ն կլինի դրանց միջև եղած հեռավորությունը հյուսիսից հարավ, կիլոմետրով.....1 միավոր

12. Որքա՞ն է Ճապոնիայի ավտոմոբիլային ճանապարհային ցանցի միջին խտությունը, եթե ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը՝ 1.131.000 կմ է.....1 միավոր
13. Յուրաքանչյուր շարքի 4 անվանումից ընտրե՛լ լոջիստիկայի մասին ճիշտ պատասխանը.....2 միավոր
- ա) Մանչեսթեր, Կրիվոյ Ռոգ, Իվանովո, Լոձ
 - բ) Թուրին, Ելզավա, Տոլյատի, Բաթումի
 - գ) Վերին Սիլեզիա, Էքսֆաաստուգ, Լոթարինգիա, Կանսկ-Աչինսկ
 - դ) Դորտմունդ, Լիվերպուլ, Ֆուլսթուրգ, Դյուսելդորֆ
 - ե) Մարսել, Համբուրգ, Կալինինգրադ, Պրահա
 - զ) Լիսաբոն, Բրյուսել, Քյոլն, Ռիզա
 - է) Սլոխտերեն, Ուրենգոյ, Մուչան, Տագովսկոյե
 - ը) Բրետան, Բուրխա, Ունգավա, Տոբագո:
14. Նշե՛լ այն երկրները, որոնց պատկանում են հետևյալ աշխարհագրական օբյեկտները.....2 միավոր
- ա) Շախգերգեն -
 - բ) Ազոբյան կղզիներ -
 - գ) Ֆրանց Իոսիֆի երկիր -
 - դ) Հայնան կղզի -
 - ե) Մոլուքյան կղզիներ
 - զ) Լակադիվյան կղզիներ
 - է) Լիպարյան կղզիներ
 - ը) Սպորադյան կղզիներ
15. Տրվածներից ո՞րն է ՄԱԿ-ի հատուկ մասնագիտացված բնապահպանական կազմակերպություն.....0,5 միավոր
- 1) ՅՈՒՆԵՍԿՈ
 - 2) ՅՈՒՆԵՍԿՈ
 - 3) ՅՈՒՆԵՊ
 - 4) ՅՈՒՆԻԿՍԱԴ
16. Ընդերքի ռազմա-տնտեսական օրինակ է.....0,5 միավոր
- 1) խոպան հողերի մշակումը
 - 2) օգտակար հանածոների բաց եղանակով արդյունահանումը
 - 3) հողաբարելավումը
 - 4) հումքի երկրորդային օգտագործումը:
17. Նշե՛լ օրինաչափությունը և շարքն ավելացնել ևս երկուսով.....1 միավոր
- Վինիպեգ, Ինսարի, Վեններն, Մեծ Արջի, Բելոյե, Թայմիր, Քարի:
18. Նշե՛լ օրինաչափությունը և շարքն ավելացնել ևս երկուսով.....1 միավոր
- Բրիստոլ, Փիթսբուրգ, Կատովիցե, Մագնիտոգորսկ, Բիլա, Բառտոու, Պուսան, Յոկոհամա:

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Ա.Թ. Գրիգորյան

Պատասխաններ
/Գնահատմանքայլը՝ 0,25 միավոր/
11-12-րդ դասարաններ

1. Կենդանի օրգանիզմների համակեցության և նրան հատուկ բնակեցման միջավայրի ամբողջությունը կոչվում է կոհամակարգ: Նրա գլխավոր հատկանիշներն են ինքնակարգավորումը և ինքնավերականգնումը:
Էկոլոգիական հավասարակշռությունը շրջակա միջավայրի այն վիճակն է, երբ բաղադրիչների փոխազդեցությունը հավասարակշռված է, տեղի էունենում համակարգի կայուն բնական զարգացում:
2. Գյուղատնտեսության զարգացման մակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշներն են.
ա) գյուղմթերքների արտադրությունը բնակչության մեկ շնչի հաշվով,
բ) գյուղմթերքների արտադրությունը մեկ միավոր հողահանդակի հաշվով,
գ) երկրի ինքնաապահովվածությունը պարենամթերքով,
դ) աշխատանքի արտադրողականությունը,
ե) աշխատանքի մեքենայացման մակարդակը,
զ) աշխատանքի միացման մակարդակը և այլն:
3. Երկրի մակերևույթի վրա բնական ու հասարակական բաղադրիչները և դրանց փոխազդեցության հետևանքով առաջացած տարածական համակարգերը կոչվում են աշխարհամակարգեր: Դրանք լինում են 3 տեսակ՝ բնական (օրինակ, լիճ, տափաստան), հասարակական (օրինակ, քաղաք, տնտեսական շրջան) և բնահասարակական (օրինակ, ջրամբար մարդածին լանդշաֆտ):
4. Տվյալ երկրի ներսում (այդ թվում նաև՝ այլ երկրների կողմից) թողարկած արտադրանքի և մատուցած ծառայությունների միագումար արժեքը կոչվում է համախառն ներքին արդյունք (ՀՆԱ): Պետական ձեռնարկությունների և մասնավոր ֆիրմաների կողմից երկրում և նրա սահմաններից դուրս թողարկած արտադրանքի և մատուցած ծառայությունների ընդհանուր արժեքը կոչվում է համախառն ազգային արտադրանք (արդյունք) (ՀԱԱ):
5. 1) ճիշտ է 3) ճիշտ է 5) ճիշտ է
2) սխալ է 4) ճիշտ է 6) սխալ է:
6. 1) սխալ է 3) ճիշտ է 5) ճիշտ է
2) սխալ է 4) սխալ է 6) սխալ է:
7. 2), 4), 1), 3):
8. 2), 3), 6), 8):
9. 1090 մետր
10. 5,4%:
11. 537 կմ:
12. 3 կմ/կմ²:
13. ա) Կրիվոյ Ռոգ ե) Պրահա
բ) Բաթումի գ) Քյոլն
գ) Լոթարինգիա է) Սուչան
դ) Ֆույսբուրգ ը) Տոբագո:
14. ա) Նորվեգիա ե) Ինդոնեզիա
բ) Պորտուգալիա գ) Հնդկաստան
գ) Ռուսաստան է) Իտալիա
դ) Չինաստան ը) Հունաստան:
15. 3) ՅՈՒՆԵՊ
16. 4) Հումքի երկրորդային օգտագործումը:
17. Նշված են սառցադաշտային (մորենային) ծագման լճեր: Ավելացնել օրինակ՝ Չուդ, Սև, Աթաբասկա, Վետերն և այլն:
18. Նշված են աշխարհի սև մետաղածուլության կենտրոններ: Ավելացնել, օրինակ, Մարսել, Ֆուկուոկա, Նովոկուզնեցկ, Դալյան, Պայերմո և այլն: